


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Ն. ՅԱ. ՄԱՍԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍԻՑՈՒՏ

Ի. Ի. ՄԵԶՋԱՆԻՆՈՎ

ԵՇՎԻ ՆՈՐ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Առաջնամատիպ «Աշխատուրյունների ժողովածուի»
III հատորից, 1948 թ.



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԱ. ՀԲԱ.ՏԱ.ՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1948


ՀԱՄԱՍՏ ՀԱՄԱՍՏԱՎԱՐ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ի. Ի. ՄԵՇԶԱՆԻՆՈՎ
Սոցիալիստական Աշխատանքի Հերթ

348 Եթզվի նոր ուսմբունքը ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Սովետական լեզվաբանությունը իր գոյությամբ ու հետագա զարգացմամբ սերտորեն կապված է կարկառուն լեզվաբան, բանասեր և կովկասի պատմության մասնագետ ակադ. Ն. Յ. Մառի անվան հետ: Համաշխարհային հոչակ ստացած այդ գիտնականի ստեղծագործական ուղին բնութագրվում է անընդհատ դեպի առաջ միտող ձգտումով, բարդ պրոբլեմները լուծելու ուղիների մշտախույզ որոնումներով, ուղիների, որոնք դրված են եղել և շարունակում են դրված մնալ կուլտուրայի պատմության մասնագետների և ձևաբանության ու շարահյուսության իրենց գործող համակարգի ամբողջ բազմաձևության մեջ եղած լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները հետազոտողների առաջ:

Սկզբնական շրջանում սահմանափակվելով կովկասի շրջանակներում՝ Ն. Յ. Մառը արդեն այստեղ էլ գտնում էր իր համար բացառիկ նպաստավոր հող տարբեր կառուցվածք ունեցող այն առատ լեզուների մեջ, որ տալիս էր ամբողջ կովկասը և լրաստանի և Հայաստանի գրական զարգացած հին լեզուներով և տարբեր սիստեմի լեռնային բազմաթիվ լեզուների ոչ գրավոր խոսվածքներով: Ավելի ուշ, երբ Ն. Յ. Մառը իր հետազոտական աշխատանքների մեջ կովկասյան լեռնասահմաններից դուրս եկավ գեպի հարավը, գեպի Առաջավոր Ասիայի կողմը և գեպի հյուսիսը, մեր Միության բազմալեզու ժողովուրդներին ընդառաջ, նրա գիտելիքների զինարանը արգեն դարձավ բավականաչափ մեծ այն բանի համար, որպեսզի հանճարեղ գիտնականի հարցախռույզ և հետազոտող միտքն իր առջև դներ համագրող նշանակություն ունեցող ինդիք: Այդ հողի վրա ստեղծվեց լեզվի նոր ուսմունքը, որն ընթանում էր ոչ թե արտասահմանյան գիտության տրամադրության մեջ ճանապարհով, այլ նրանից անկախ հիմունքներով:



Ն. Յա. Մառի գիտական գործունեությունը իր առաջին երեք տասնամյակների ամբողջ ընթացքում՝ սկսած 1888թ. առաջին տպագրված աշխատությունից, բոլորովին նեղ լեզվաբանական չի եղել: Ճիշտ է, Ն. Յա. Մառը ուսումնասիրում էր տարբեր լեզուներ, կազմում էր նրանց քերականությունների տկնարկներ, բայց միևնույն ժամանակ նա իր աշխատանքի ու ժամանակի զգալի մասը հատկացնում էր հին տեքստերի մեկնաբանությանը, այսինքն՝ զուտ բանասիրական աշխատանքին: Դրանից բացի, նա իրեն հատուկ ջանասիրությամբ ու հափշտակությամբ ղեկավարում էր Հայաստանի հին մայրաքաղաքի (Անի քաղաքի) սիստեմատիկ պեղումները, իսկ 1914 թ. պատերազմական ժամանակի և հաջորդ տարիներին գլխավորում էր Թուրքահայաստան ուղարկված էքսպեդիցիան, հավասարապես նաև հնագիտական աշխատանքները: Այդ ամբողջ աշխատանքի ընթացքում Ն. Յա. Մառը հանդես էր զալիս կարծես իրքեւ կոմպլեքսային գիտական, պատմաբան՝ այդ տերմինի ամենալայն առումով, որը հատուկ է ընդհանրապես արենելագետի, որպիսին և նա էր իր կյանքի այդ ստեղծագործական տարիներին: Հետազոտության առարկան նա լուսաբանում էր բոլոր կողմերից: Նա վերցնում էր ժողովրդի նյութական կուլտուրան, դրա սեփական կամ օտար գրավոր հուշարձանները, որոնք խոսում էին նրա մասին, և այսահետեւ միացնում էր նաև լեզվական նյութի հետազոտությունը: Այդ բոլոր տվյալները մեջ էին բերվում իրքեւ պատմուկան վկացություններ, և ինքը լեզուն, դրա առնչությամբ, գիտվում էր որպես առաջնակարգ նշանակության պատմական աղբյուր:

Այստեղից լիսազեւ հասկանալի է դառնում, որ Ն. Յա. Մառը նաև լեզվին մոտենում էր նշանակալից չափով իրքեւ պատմաբան: Իր կյանքի վերջին 15 տարիներին ուշագրությունը առավելապես լեզվաբանությանը նվիրելով և դառնալով առաջատար լեզվաբան՝ նա արդեն չէր կարող գիտել լեզուն՝ իր զարգացումը պայմանավորող հասարակական միջավայրից կտրված և ստատիկ ձևով մոտենալ նրա քերականական ձեերի նկարագրությանը: Այդ վերջինները Ն. Յա. Մառի առաջ կանգնում էին որպես պատմականորեն առաջացած իրակություններ: Լեզուն իր բոլոր գրաւերումներով հետազոտողի կողմից բացահայտվում էր իրքեւ շարժունությամբ ներծծված, իրքեւ իր զարգացման ուղիով միշտ առաջ ընթացող երեսույթ, որը միևնույն ժամանակ իր մեջ պահպանում է իր՝ երբեմն էլ շատ հեռավոր անցյալի խիտ նըստ-

վածքների հետքերը: Դրանով են բացատրվում նույնպես ծառզումնաբանական կարգի մի շարք հարցերի լուծման փորձերը ոչ միայն այս կամ այն լեզվի լինելության հետազոտումների մեջ, այլ նաև ընդհանրապես մարդկային լեզվի ծագման պրոբլեմի լայն զրագածքով: Ն. Յա. Մառը ընթանում էր դեպի լեզվաստեղծագործական ամբողջ պրոցեսի ընդգրկումը հենց իր սկզբնական աստիճաններից՝ ներառյալ մինչև մեր ժամանակի կենդանի խոսքը: ՍՍՌՄ լեզուների հարստությունը սկսեց դիտվել համաշխարհային հարստության ընդհանուր ֆոնի վրա՝ երկրագնդի լեզուների հակայական բազմազանության մեջ: Լեզվի նոր ուսմունքը դրանով իսկ դարձավ ընդհանուր լեզվաբանության նոր ուղղություն:

Առաջիւ նման պատմաբանի հետաքրքրություններով առգործաց՝ Ն. Յա. Մառը իր լեզվաբանական աշխատություններում մասնագիտութեան շարունակեց մնալ հենց նույն պատմաբանը: Այդ պատմառով էլ լեզվի ուսումնասիրությունը առանց այդ լեզվով խոսող ժողովրդի պատմության ծանօթությանը Ն. Յա. Մառը պատկերացնում էր միանգամայն անհնարին: Այստեղից հետեւում է նրա պնդումը այն մասին, որ լեզուն, որպես հասարակական կարգի երեսությ, հենց ուսումնասիրության պրոցեսում իր դրյություն ունեցած և գոյություն ունեցող բոլոր կառուցվածքի մանրամասնությունների մեջ հասարակական հիմնավորում պետք է ստանա: Դրանով իսկ առաջ է քաշվում Ն. Յա. Մառի հիմնական դրույթը, որը ձեւակերպվում է «լեզու և հասարակություն» թեզիսով:

Խորացումն այդ թեմայի մեջ ընդհուպ մոտեցրեց Ն. Յա. Մառին Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի ուսմունքի առաջատար դրույթներին՝ հասարակության, հասարակական բոլոր երեսույթների, հետեւաբար նաև լեզվի զարգացման մասին: Դրանով դրվեցին լեզվի մատերիալիստական ուսմունքի հիմքերը, որոնք կասուցված էին սոցիալական բազայի և մտածողության ու լեզվի դիմականության միասնության սկզբունքների վրա: Հասարակական ձևերի զարգացման պատմական պրոցեսը տնտեսության մեջ և աշխատանքային գործունեության պայմաններում առաջացած փոփոխությունները իրենց արտացոլումն են գլուխում ինչպես գոյություն ունեցող գիտակցության նորմաների, նույնպես և լեզվի գործուն կառուցվածքի, նրա բառապաշտիքի և նույնիսկ քերականության մեջ: Կարող է կերպարանավորիվել

ոչ միայն բառի քովանդակությունը, այլև քերականական նորմաների դերը, և նույնիսկ այդ քերականությունը Այդ առնչությամբ ուժեղանում է ուշադրությունը ձևական կողմի իմաստաբանության և նրա իմաստային նշանակության նկատմամբ՝ լեզվի բառարանական կազմի, նախադասության կառուցվածքի և ընդհանրապես խոսքի ամբողջ կազմության մեջ,

Լեզուն ինքնիրեն չի փոխվում: Նրա փոփոխությունները կատարվում են հասարակական այն միջավայրի ներգործությամբ, որը այդ լեզուն օգտագործում է որպես հաղորդակցության անհրաժեշտ միջոց՝ բավարարելով նյութական կարիքների և զարգացող իդեոլոգիայի կենսական պահանջները: Այստեղ լեզվի և մտածողության կապը աներկայելի է: Միտքը արտահայտվում է լեզվով, որը իր բոլոր բաղկացուցիչ տարրերով իմաստավորված է: Զեք առանց բովանդակության գոյություն ունենալ չի կարող: Այստեղից էլ ելք նեղ ձևական վերլուծությունից դեպի ձեր հատուկ բովանդակության մանրազնին հետազոտման կողմը: Դրանից շահում է նաև ինքը ձևական կողմը: Ն. Յ. Մառը վճռականորեն առարկում է լեզվի նկատմամբ ցուցաբերած միակողմանի, միայն նեղ ձևական մոտեցման դեմ: Միենույն ժամանակ նա, իհարկե, չի վիճարկում լեզվի ձևական կողմերը հաստատ իմանալու անհրաժեշտությունը: Մեկը մյուսին չի հակասում: Զեք լավ իմացումը, նրա բովանդակության և նշանակության յուրացման դեպքում՝ խորացնում է նրա ժամանակակից վիճակի ըմբռնումը և օժանդակում է նրա պատմական փոփոխությունների պատճառների մանրազնին հետազոտությանը: Միայն այսպիսի ուղիով լեզվի պատմության հետազոտողի համար ապահովում է հորիզոնի ընդարձակությունը:

Լեզվի նկատմամբ ցուցաբերած պատմական մոտեցումը, որը ընթանում է հենց նոր ցույց տրված ուղղությամբ, այսինքն՝ լեզվի և մտածողության դիալեկտիկական միասնության հաշվառումով՝ այստեղից բխող բոլոր հետեւթյուններով, արդարացրեց մի շարք լեզուների համար առաջ քաշված այն օրինաչափությունը, որն արտահայտվում է այս կամ այն հասկացությունը բառական կամ քերականական տարբեր միջոցներով հաղորդելու ձգտման մեջ: Իրա վրա կառուցվում է լեզվաստեղծման միասնական պրոցեսի հասկացությունը, որը նշանակալի չափով նոր լուսաբանություն է ստացել:

Շատ երևույթների նմանությունը, որը հաճախ նկատվում

է իբենց քերականական կառուցվածքով միանգամայն տարբեր մի շաբթէղուների մեջ, վաղուց է նշվել Լեզուների առանձին խմբերի ընդհանուր ակնարկներին վերաբերող ամփոփ աշխատությունների մեջ երբեմն երկչուտ, երբեմն ավելի վճռականորեն միտք է արտահայտվել բոլոր լեզուները միավորող և նրանց համար ընդհանուր ինչ-որ օրենքների առկայության մասին (ի. Սեպիր): Բայց նման տեսակի բոլոր դատողությունները հենված էին գլոխավորապես հենց ձեական կրողմերի համեմատության, հիմքերի նույնացման, կցական միջոցների մոտիկության, օժանդակ բառերը օժանդակ մասնիկների փոխանցման վրա և այլն: Մինչդեռ ստեղծագործական միասնությունը (լեզվաստեղծման պրոցեսը և իր հետագա զարգացումը) երբեք էլ միայն դրանով չի սահմանափակվում: Զարգացնելով Ն. Յա. Մաոի միտքը լեզվի և մտածողության միասնության իր ըմբռնման մեջ, հեշտությամբ կարելի է ընդպարձակել մեջ բերված նյութի սահմանները՝ ընդգրկելով ոչ միայն ձեական նմանությունները, այլև ձեական տարբերությունները: Վճռողը հանգես է գալիս բոլվանդակության ընդհանրությունը, այն ըմբռնման ընդհանրությունը, որը արտահայտվում է տարբեր լեզուներով: Դիտակցության նորմաների նմանության ժամանակ հասարակական միջավայրի զարգացման որոշ էտապում նաև լեզվի մեջ նրանց ազգեցությամբ ստեղծվում են հասկացական կատեգորիաների կայուն սիստեմներ, որոնք կազմում են բառերի խմբեր ըստ իրենց ձեական և իմաստաբանական հատկանիշների, ինչպես նաև նրանց միացումներ նախադասության շարահյուսական խմբերի մեջ (որոնք հաճախ անվանվում են «սինտագմաներ»), մի բառի մյուսներով. պայմանագրված նշանակություններ (հատկանշային արտահայտություն և այլն): Այդ կատեգորիաները, որոնք հանգես են գալիս հասկացությունների լեզվական նյութի մեջ՝ ստանալով քերականական ձև, դառնում են քերականական հասկացություններ: Նրանց ձեական արտահայտությունն ըստ լեզուների կարող է միանգամայն տարբեր լինել, մտցնելով արտաքին ձեերի բաղմազմանություն՝ իրենց միավորող միասնությունը հաղորդելու համար:

Այսպիսի եղբակացություններ, որոնք հանդիսանում են քրանաջան և բազմամյա աշխատանքի արդյունք, որոշակի պարզություն են մտցրել աշխատի լեզուների ըարդ ու բազմազան կառուցվածքների առանձնահատկությունների հասկացության մեջ: Մարդկային լեզվի զարգացման պրոցեսի միասնությունը

երբեք էլ չի հանդում միայն նրա արտահայտման ձևելան կողմի
նույնությանը: Լեզվական ձեր մեջ դրված հասկացությունները
երբեք էլ չեն պահանջում իրենց արտահայտման միասնական
ընդհանուր ձև ոչ միայն բառապաշարի, լեզվի բառաքանական
հիմքերի նույնության, այլև քերականական կառուցումնե-
րի տարբեր տեսակների և քերականական տարբեր ձևերի մեջ: Մի կանույն տուարկան տարբեր լեզուներում կարող է ստանալ
տարբեր անվանումներ: Նախազառագության անդամների մեջ եղած
շարահյուսական միենույն հարաբերությունները կարող են
որոշ լեզուներում հաղորդվել շարահյուսական այնպիսի եղանակ-
ներով, որոնք խիստ կերպով տարբերվում են այն շարահյուսա-
կան միջոցներից, որոնք այս կամ այն նպատակով օգտագոր-
ծում են տարբեր լեզուները և այլն:

Լեզվական այդ ամբողջ բարդ ապարատը գտնվում է մշտա-
կան շարժման մեջ, որի տեսքը համաձայն հասարակական գոր-
ծոնի համապատասխան պահանջների երբեմն արագանում, եր-
բեմն դասդադում է: Խսկապես լեզվում ամեն ինչ գտնվում է
շարժման մեջ: Այդ արգեն գարձել է հանրահայտնի հրականու-
թյուն, բայց այստեղ էլ լեզվի մեջ հետազոտվող փոփոխություն-
ները սովորաբար ստհմանափակվում են ժամանակագրական կար-
գով փոփոխվող ձևերի զուգազրությամբ: Ստացվում է հետեռ-
դական, երբեմն աստիճանական փոփոխությունների խիստ եր-
կար շարք: Աստիճանական հաջորդումների երկար տևողականու-
թյամբ հաստատվում են նշանակալի տեղափոխություններ, որոնք
բացատրվում են, այնուամենայնիվ, անընդհատ առաջընթաց
շարժման հետևողական ընթացքով: Ի վերջո լեզուն հեռանում է
իր սկզբանական նախատիպից՝ երբեմն նույնիսկ նրանից խստո-
րեն տարբերվելով:

Նման տեսակի բոլոր կառուցումների մեջ դուրս է թողնը-
վում ոչ միայն լեզվի և մտածողության միասնության մասին
վերեւում հիշատակված դրույթը, այլև լեզվաբանի աշխատանքի
հիմնական թեզիսի վճռական դրվածքը՝ «լեզուն և հասարակու-
թյունը»: Ն. Յա. Մառը հենվելով լեզուների զարգացման հասա-
րակական պայմանագորվածության պատվանդանին՝ հանդում է
միանգամայն այլ եղբակացությունների: Նա սահմանում է, որ
փոփոխությունները լեզվի մեջ կարող են դանազանակերպ լի-
նել: Լինում են աստիճանական և աննշան փոփոխություններ,
որոնք հետազոտվում են բառ-իմաստի նրբերանգների կամ նրա

հիմքի մասնակի ձևափոխություների մեջ: Կարող են տեղի ունենալ նաև ավելի արժատական փոխանցությունը, որոնք ստեղծեն նոր որակի կազմավորությունը: Այդ հոգի վրա, խաչավորման պլրոցեսում ստացվում են նոր լեզուներ, հին ձևերը հանդիս են դալիս նոր բովանդակությամբ կամ իրենց քերականական այլ օգտագործումով: Երենց արժատներով նրանք կառչում են անցյալին, թեև իրենց ժամանակակից բովանդակությամբ նրանք արդեն նոր են: Նորը լեզվի մեջ կարող է լինել ոչ միայն բառերի փոխառումը և քերականական ձևերը, այլև սեփական միջոցները:

Պատմաբան-լեզվաբանի համար նշանակալից հետաքրքրություն են նիրկայացնում հենց վերջին տեսակի փոխանցությունը, որոնք սիստեմատիկորեն չեն հետազոտվում: Նրանք լեզվաբանի հետազոտական աշխատանքների մեջ ձեռք են բերում հատուկ նշանակություն, եթե ընդգրկում են լեզվի ամբողջ հիմնական կառուցվածքը: Որակապես նոր կազմավորությունը, իրենց ավելի խոր ուսումնասիրության գեղքում, բացահայտում են լեզվական շերտավորությունը պատմական փոխանցումը, որը թույլ կերպով է հանդես գալիս և սովորաբար չի որսացվում միայն աստիճանական կարգի հարթանցությունի հետազոտությամբ: Կերպարանափոխության գիտվող ուղիների հաստատման համար նշանական և միակ զեկավար ուղենիշները հանդիսանում են պատմական և գիտակետիկական մատերիալականի առաջատար գրույթները:

Սովետական լեզվաբանությունը արդեն բոլորում է իր խիստ ինտենսիվ աշխատանքի համարյա 30 տարին: Երեք տասնամյակների այդ ժամանակաշրջանում նշանակալի փոփոխություններ տեղի ունեցան ինչպես մեր Միության հսկայական տերիտորիայում գտնվող լեզուների զարգացման ընթացքի, նույնպես և իրենց ուսումնասիրման եղանակների մեջ: Արժատական տեղաշարժներ են նկատվում զուտ գործնական բնույթի առաջնակարգ ինչիրների հետ ընդհուպ շաղկապվող հետազոտական աշխատանքների մեջ: Շատ ժողովուրդներ այդ ժամանակաշրջանում առաջին անգամ ստացան գրականություն իրենց մայրենի լեզվով: Ռուսական գրերի հիման վրա նրանց համար մշակվում էին այլուրեններ, որ պահանջում էր այդ լեզուներից յուրաքանչյուրի հնչյունաբանության մանրազնին ուսումնասիրությունը: Սահմանվում էին ուղղագրական կանոններ, գրվում էին դպրոցական ձեռնարկներ, կազմվում զիտական մանրաժամանքերականություններ՝ նյութի լայն ընդգրկումով, որը ուսումնա-

սիրվում էր իր մանրամասների և լեղվական գործում նորմաների պատմական լուսաբանության մեջ։ Ուսումնասիրվում էին բարբառներ և ժողովրդական բանասացների բանավոր ստեղծագործությունը, որին փոխարինելու հն գալիս գեղարվեստական գրականությունը և գրավոր լեզուն։ Մեծ աշխատանք է տարրված նաև բառարանների կազմության բնագավառում։

Այդ բարդ և մանրակրկիտ ամբողջ աշխատանքի մեջ առաջին տեղը բռնում է մեթոդոլոգիական կողմը, որը ապահովում է լեզվաբանի առաջ դրված խնդրի կատարումը։ Աշխատանքի այդ կողմը անխուսափելիորեն առաջարդվում էր նոր բացահայտված, երբեմն էլ իրենց լինելության մեջ՝ գտնվող փաստերի ավելի բորն ուսումնասիրման պահանջներով։ Դեռևս մոտ անցյալում իրենց զարգացմամբ հետամնաց ժողովուրդների հաղորդակցումը բարձր կրւկուրային և գրան հաջորդող իրենց արագ աճումը, որը պայմանավորված է տնտեսության և կենցաղի վերելքով, զբավոր լեզվի ներմուծումը, որը ժողովրդական բանավոր, համարյա թե ցեղական լեզվի համեմատությամբ ինչ որ նոր բան է ներկայացնում, — այդ բոլորը հսկայական տեղաշարժներ են, որոնք տեղի են ունենում մեր աշքերի առաջ։ Ստացվեց հսկայական չափի թարմ նյութի կուտակում, որը բացահայտում էր հետազոտողների նկատած արմատական տեղաշարժների պատճառը, տեղաշարժների, որոնք ինարկե այս կամ այն լեզվի սեփական աճին պարտական չէին։ Այդ կապակցությամբ տեսական աշխատանքը վերեկում ցույց տրված իր ուղղվածությամբ, իր գործադրման, ստուգման և ճշտման համար բացառիկ նպաստավոր հող ստացավ։ Նա աճեց ու ամրացավ լեզվական կոնկրետ նյութի ուսումնասիրության ընթացքում։ Այսպես ստեղծվեց սովորական լեզվաբանությունը։

Գիտաշխատողը բախվում էր բացառիկ արժեք ունեցող նյութի հետ։ Նա հարկադրված մանում էր քիչ հետազոտված, իսկ երբեմն էլ իսպառ չհետազոտված, իրենց կառուցվածքով խիստ բազմազան և ինքնատիպ լեզուների ուսումնասիրության մեջ։ Սթիլ լեզուների հարուստ բազմակերպությունները պահանջում էին իրենցից յուրաքանչյուրին մոտենալ իր սպեցիֆիկ առանձնահատկությունները հաշվի առնելով։ Դրանք էլ անխուսափելիորեն հանգեցրին իրենց զուգահեռ ուսումնասիրությանը, որը բացահայտում էր գործող քերականության նորմաների նման և տարբեր մոմենտներ ու իր հերթին ճշգրտում էր յուրաքան-

չյուր հետազոտության առարկայի հաստատված նորմաները:
Տարբեր կառուցվածք ունեցող լեզուները դրանով իսկ ավելի
խոր էին ուսումնասիրվում: Իրենց կառուցվածքային հատկու-
թյունները ավելի ճիշտ որոշում էին ստանում և իրենց միավո-
րող խմբերի սահմաններում համեմատվելով միմյանց հետ՝ դա-
սակարգվող սխմաների կառուցումների համար հիմք էին տալիս:

Երկարատև աշխատանքի ընթացքում զարգացվում և խորաց-
վում էին լեզվաբանական ստեղծված ուղղության սահմանները,
որոնք հաճախ փոփոխության էին ենթարկվում հենց Ն. Յա.
Մառի կողմից: Զեռնամուխ լինելով լեզվական փաստերի մեկ-
նաբանություններին՝ իրենց նոր լուսաբանությամբ, որը լեզվա-
բանության մեջ արմատացվել էր մարքսիզմի-լենինիզմի դրույթ-
ներով, Ն. Յա. Մառը որոնում և բացատրություն էր տալիս
դրանց միանգամայն այլ ձևով, տարբեր այն սովորական մեկ-
նաբանություններից, որ տալիս էին երիտասարդ քերականների
հին գպրոցի ներկայացուցիչները, որոնց մոտ Ն. Յա. Մառը դաս-
տիարակվել էր: Նա իսկույն և եթ շտապում էր բաժանել իր
թարմ մտքերը ոչ միայն մասնագետների նեղ շրջանակներում
կարգացած գիտական զեկուցումներով, այլ նաև ուսանողական
առողջապարհայի և մամուլի միջոցով: Այդ եզրակացությունները
հաճախ վաղաժամ էին դուրս գալիս, չէին ամբացվում հենց իրեն՝
Ն. Յա. Մառի հավաքած և լերացածակած նյութի հետագա վեր-
լուծությամբ, այդ ժամանակ նա իրեն հատուկ ամբողջ վճռակա-
նությամբ մտցնում էր անհրաժեշտ ճշգրտումներ և ուղղումներ,
շատ անգամ առարկելով իր իսկ սկզբանական աշխատություննե-
րում արտահայտած սեփական եղանակացությունների դեմ: Դա
աշխուժ, տենդագին մի լաբորատորիա էր, որի մեջ Ն. Յա. Մառը
անդաման գրավում էր նորանոր ազեպտների (աճեպտօն) գլխա-
վորապես ալիև երիտասարդ սերնդի գիտական աշխատողների
թվից:

Ն. Յա. Մառը իրեն հատուկ հաստատակամությամբ համառո-
րեն առաջ էր ընթանում, մեկը մյուսնին հաջորդող լեզուների ներ-
գրավումով ընդարձակում իր հորիզոնը, թարմ նյութի հիման
վրա ստուգում մատերիալիստական ուսմունքի հիմնական դրույթ-
ները լեզվի մասին:

Նախորդ տարիներին առաջ քաշված այդ հիմնական կոն-
ցեսցիաների ճշգրտման ժամանակաշրջանը չընդհատվեց նաև
լեզվաբանների նոր դպրոցի հիմնադրի մահվամբ: Նոր նյութի

հոսանքը անընդհատ շարունակվում էր, իսկ նրանց վրա կատարված աշխատանքի ձեռք բերված հետազոտական փորձը ամրացնում էր սովետական լեզվաբանների կադրերին՝ ստեղծելով հետագա արզյունավետ աշխատանքի համար բոլոր հնարավորությունները։ Հետազոտական միտքը դարձանում էր, մեթոդական հիմունքները ամրանում, նրանց մշտական ստուգումը՝ լեզվաբանության մեջ պատմական և գիտական մատերիալիդմի առաջարար մեթոդների արժատավորման ընթացքում, ճշտեց ուսումնասիրվող նյութին ցուցաբերվող յոտեցումը։ Դըրանով իսկ կատարվեցին Ն. Յա. Մառի ցուցումները։ Նա միշտ պահանջում էր տեսական մասի ամրացումը։ Նրա մեջ նա տեսնում էր մեր մեծ, բազմազգ հայրենիքի կուլտուրայի վերելքի օգտին կատարվող ամբողջ գիտական աշխատանքի շարունակվող աճի հաջողության գրավականը։ Նրանով ապահովվում էին բոլոր այն բարդ առաջարանքները, որոնք զբարձր առաջարանքների առաջարանքների առաջ։

Հաճախ լսվում էր Ն. Յա. Մառի հասցեին ուղղված մեզադրանք այն մասին, որ իբր թե տեսական պրոբլեմատիկայի մեջ իր հետաքրքրություններով խորանալու ընթացքում նա աստիճանաբար հեռանում է պրակտիկայից, և որ իր գլխավորած լենինցրադյան գիտական կենտրոնը չափազանց տեսականացված է։ Այդպիսի զատողություններ խիստ հապճեպ են։ Քիչ ուսումնասիրված և գիտության կողմից բոլորովին ձեռք չտված գրականության հաղորդակից դարձած լեզուների համար զասագրքեր կազմելու գույտ պրակտիկ առաջարանքների մեջ ամենից առաջ պահանջվում էր հաղթահարել դեռևս գոյություն ունեցող այն տեսնդենցը, որ բոլոր լեզուների մեջ տեսնում է քերականական միատեսակ սխեմա նախադասության անդամաւան և առավել ես բառապաշտային կազմն ըստ խոսքի մասերի բաֆանելու մեջ, այսինքն՝ ի վերջո հաղթահարել զասագրքերի կազմումը նախապես մի մշակված շաբլոնով։ Այդ բոլորով միայն մթագնվում էին տարբեր լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները, աղճատվում էր իրենց ճիշտ նկարագրությունը և գժվարացվում ավանդումը։ Այդ ուղղության գեմ տարվող պայքարը անխուսափելիորեն պետք է ուժեղացներ ուշադրությունը տեսական մասի նկատմամբ։ Մեթոդոլոգիական կողմը առաջին պլանի վրա էր դրվում, որովհետեւ նրանով է պայմանավորված Սովետական Միության՝ իրենց կառուցվածքով խիստ բազմա-

կերպ լեզուների կոնկրետ նյութի ուսումնասիրման ժամանակ կառարկված գիտական եղբակացությունների ճշությունը:

Դրանով էլ արդարացվում է ոչ միայն հետազոտական աշխատանքի մեթոդովիական կողմի ուժեղացումը, որը քերականություններն ու բառարանները կազմելու գույք պրակտիկ խընդիրներին գուգանեսու է գնում, այլև ափելի վերացական բովանդակությունը մի շարք հարցերի զրվածքը, որը առաջին հայացքից կարծեք թե ուղղակի առնչություն չունի լեզվական պրակտիկայի առաջադրանքների հետ։ Դա աշխատանքի անհրաժեշտ մի էտապ էր, որը երբեք էլ անսուլթյունը պրակտիկայից չէր անշատում, բայց հետազայում ։ Ն. Յառի հիմնադրած հենց նույն լեզվի և Մատծողության ինստիտուտի պատերի ներսում ստեղծում էր հնարավորություններ իրենց ուժերի ամբողջ գիտակցումով խորանակու ԱՍՌՄ կենդանի լեզուների մանրակրկիս ուսումնասիրության մեջ։

Ի՞նչ է իրենից ներկայացնում լեզուն, ինչպես է նա ստեղծվել, ինչ ուղիներս է ընթանում նրա զարգացումը, — այդ բոլորը երբեք էլ վերացական գատողություններ չեն։ Հասկանալ լեզվի հատկությունը, յուրացնել պատմական պրոցեսի ընթացքը, որը հացնում է լեզվի ժամանակակից վիճակին, նշանակում է ուսումնասիրվող լեզվի կառուցվածքի հասկանալուն ճիշտ մտենալու հնարավորություններ ստեղծել։ Այդպիսի աշխատանք իր առաջ զբցի ։ Ն. Յառը, այդպիսին իրենց առաջ զբցին նաև իր հետևորդները արդեն իրենց ինքնուրույն աշխատանքի հետազատըին նիւթին։ Այդպիսի առաջադրանք շարունակվում էն քննարկել նաև այժմ։ Այնուամենայնիվ հիմնական ուղղությունը արդեն որոշված է, և սովորական լեզվաբանությունը, հենվելով կոնկրետ նյութի ուսումնասիրման բնագավառում կատարած իր աշխատանքների վրա՝ իր հետազոտական աշխատանքների մեջ մտցնելով մարզսիզմի լենինիզմի ղեկավարող զրույթները, հաստատ առաջ է ընթառում։

Ինձ վիճակված է ամփոփել այն հիմնական դրույթները,

որոնց վրա կանգնած է լեզվի նոր ուսմունքը իր զարգացման արդի էտապում: Ես Ն. Յա. Մառի բոլոր արտահայտությունների և իրենց լինելության, ճշգրտման ու փոփոխման ընթացքում ձեւավորված առանձին հայացքների քննության մանրամասնությունների մեջ չեմ մտնելու: Այդպիսի քննությունը կրարդացներ շարադրանքը՝ գրավելով խիստ ժամանակի և տեղացի այդ, նա ավելորդ էլ է իմ այս հողվածի շրջանակներում: Ոչ թե պետք է պարզել մանրամասները, այլ առաջատար ուղղությունը՝ հասկանալու համար այն հիմքերը, որոնց վրա շարունակում է զարգանալ սովետական լեզվաբանությունը: Այդ կօժանդակի առաջիկա հետազոտական աշխատանքի ամրացմանը և միենույն ժամանակ պարզ կրացահայտի այն հսկայական նշանակությունը, որ ստանում է լեզվաբանության զարդացման մեջ Ն. Յա. Մառի անցած ստեղծագործական ուղին և լեզվի նոր ուսմունքի հիմնագրի գիտական այն բացառիկ ծառայությունը, որը սուս խոշորագույն գիտնականների մեջ նրա համար պատվավոր տեղ ապահովեց:

Մեր ուղղու սկիզբը համարյա թե շաղկապվում է ռերիտասարդ քերականական» անունով հայտնի լեզվաբանական խոշորագույն ուղղության վերջավորությանը: Երիտասարդ քերականների գպրոցից սկզբնավորվում է երկու ուղղություն: Արեւուղքում ստեղծվում է սոցիալական գպրոցը, որը վերջ է տալիս իր նախորդին: Լեզվաբանության մեջ սոցիալական ուղղության հիմնագրի՝ Ժընեվի գիտնական դե՛Պոսյուրի նշած նոր ուղիների որոնումների մեջ հենց վերջին ժամանակներում տեղի է ունենում նրա զիրքերի վերանայման պրոցեսը, որը ընդհանուր լեզվաբանությանը հասցերել էր իր զարգացման նոր էտապի՝ առանձնացնելով ստրուկտուրալիստների գպրոցը: Մեղ մատ իր զիրքերի ամրացրեց սովետական լեզվաբանությունը:

Միանգամայն բազմազան համակարգ ունեցող լեզուների լեզվաբանական հետազոտությանը իրենց աշխատանքը նվիրած մասնագետների մեծամասնությանը արդեն քաջ հայտնի են այն հիմքերը, որոնց վրա կառուցվում է Ն. Յա. Մառի հիմնագրած լեզվի նոր ուսմունքը: Ես համարձակվում եմ խոսել դրանց մասին հակիրճ, ընդհանրացող ձեռվ, հանրադումաբի բերելով հենց այս հողվածի նախորդ տողերի արդյունքները: Հաշվի եմ առնում առաջատար գծի այն ըմբռնումը, որը երեք տասնամյակների գիտական աշխատանքի հետեանքով այժմ հաստատվել է: Լեզվի

նոր ուսմունքի բազմիցս վերանայված և ճշգրտված հիմնական դրույթները, որոնք այժմ ընդունված են սովորական լեզվաբանների լայն շրջանակների կողմից, հետեւյալ ձևով են ներկայացվում.

1. Լեզուն սոցիալական կարգի երեսույթ է: Այդպիսի պնդումը կարծեք թե նոր չէ: Այդ ասված է և արտասահմանյան լեզվաբանության կողմից: Արևուտքում ձևավորված ոլեզվարանության սոցիալական դպրոցի» հենց անվանումը պարզ կերպով ընդգծում է լեզվի զարդացման մեջ հասարակական գործոնի ձանաշռումը նուև արտասահմանյան գիտնականների կողմից: Այդ չեր բացասվում հենց նույն բնագավառի գիտական ուղղություններին նախորդող մի շարք մարդկանց կողմից ինչպես արտասահմանում, նույնպես և մեզ մոտ ն. Յա. Մառից շատ ու շատ ասած:

Սովորական լեզվաբանությունը չի սահմանափակվում վիճարկության ոչ ենթակա և գիտական լուրջ շրջանակներում այժմ արգեն ոչ ոքի կողմից չվիճարկվող տվյալ փաստի արձանագրուժով միայն: Բայց բանը միայն նրա ձանաշռումով չի սահմանափակվում: Բոլորը հանգում է նրան, թե ինչ չափով և ինչպիսի սահմաններում է կիրառվում հանրաճանաչ հասարակական գործոնը, թե պետք է սահմանափակվել միայն նրա վկայակոչումով, կամ թե նրա վրա հիմնել ամրող հատադրատական աշխատանքը՝ գիտելով լեզվական բոլոր երեսույթները իրենց բարդ մանրամասների մեջ նշված տեսանկյունով: Սովորական գիտությունը ընթանում է իր բոլոր եղբակացությունները այդ հիմքի վրա կառուցելու ուղիով՝ ուսումնասիրելով լեզուն և լեզվական առանձին ձևերը իրենց հասարակական հիմնավորման մեջ:

Ոչ միայն լեզուն իր ամբողջությամբ առնված հասարակայնության գործունեություն է, այլև նրա բոլոր բաղկացուցիչ մասերը, բարը, բառի ձևավորումը, բառի օգտագործումը նախադասության մեջ, բառերի մեկը մյուսի հանդիպ եղած հարաբերությունները արտահայտող քերականական միջոցները իրենց իազմության մեջ, նույնիսկ նշույթները, ընդհանրապես խոսքի բոլոր արրերերը կրում են նրանց ստեղծող հասարակական միջավայրի կնիքը: Քերականական կառուցվածքը ուսումնասիրելով լեզուն և լեզվական առանձին համարականական հիմնավորման մեջ:

որոշում է քերականական ուսումնասիրվող ձեր սոցիալական նշանակությունն ու սոցիալական բովանդակությունը:

Սահմանափակվելով նույնիսկ նրանով, ինչ որ արդեն կատարված է սովորական լեզվաբանության կողմից, կարելի է լրիվ համոզմամբ հաստատել, որ շարահյուսական կարգի և ձևաբանության վերլուծման մեջ, նրանց կապի ու փոխագարձ պայմանավորվածության մեջ մացված է շատ բան, որ օգնում է նրանց գործող նորմաների ավելի պարզ և ավելի ճիշտ ըմբռնմանը: Նույնիսկ հաջորդի մասին ստեղծված ուսմունքը նշանակալից մասով ուղարկան գիտնականներին է պարագան: Նրանց կողմից է, որ ավելի հստակ ձևով սահմանված է հնչյունի հասարակական արժեքը: Նրանց կողմից ել այդ հիմունքով մշակվում է դրույթներ՝ հնչյուն-հնչույթների, Ն. Յա. Մատի արտահայտությամբ «հասարակականորեն մշակված հնչյունների» մասին:

2. Լեզվի նկատմամբ կատարված հետազոտական աշխատանքի մեջ ամբողջ ուշադրությունը կենտրոնացվում է ձեր և իր բովանդակության ուսումնասիրության վրա: Զնն ու բովանդակությունը անբաժանելի են, երբ դրանց ցուցաբերում են հետազոտական մոտեցում: Բացահայտվում է գաղափարական մասը և նրա արտաքին գրակորումը խոսքի մեջ: Այստեղ իր ամբողջ սրությամբ գրվում է լեզվի, իրեն հասարակականորեն մշակված հաղորդակցության միջոցի, իրեն մտքի ունալ արտահայտչի ուսումնասիրման պրոբլեմը: Այստեղից ինքնըստինքյան ժագում է այդ կապերի նոր ըմբռնումը և մատեցումը գեղի լեզուն, որը հանդես է գալիս իրեն ունալ գիտակցություն, իրեն նրա իսկական արտահայտություն, որով ներծծված է ոչ միայն բառապաշտաշարային կազմի իմաստային կողմը, այլև քերականական ամբողջ կառուցվածքը՝ իր բոլոր բառապուլորդությունների և բառակազմությունների ամբողջությամբ առնված:

Լեզուն և մտածողությունը հնաց սկզբից սերտորեն կապված են: Այդ կապը պահպանվում և հանդես է գալիս մարդկային լեզվի զարգացման ամբողջ պատմության ընթացքում: Նա թափանցում է խոսքի և նրա բաղկացուցիչ բոլոր մասերի մեջ: Լեզուն և մտածողությունը հանդես են գալիս իրենց գիտական կական միասնության մեջ, յուրաքանչյուրը իր առանձնահատկություններով, բայց մի ամբողջական անխզելի կապակցության մեջ: Զերծ չի կարող լինել առանց բովանդակության: Բովանդակությունը պետք է ունենա իր ձևական արտահայտությունը:

Լեզվի և մտածողության կապը, ինչպես նաև լեզվի հասաքական նշանակությունը, ըստ էության, ոչ ոքի կողմից չեն հերթափում: Բայց հենց ավյալ դեպքում լեզվաբանական տարբեր պարզությունների եղանակությունները բաժանվում են, և լեզուն նույնիսկ արտասահմանյան ժամանակակից լեզվաբանության ուղղությունների մեջ դիտվում է նշանակալից աստիճանի մեկուսացված ձևով: Կարծեք թե նշվում են երկու ուղղությունները, որը գլխավորում են դեռ Սոսյուրի (Սրբամուտքի սոցիալական գպրոց) հաջորդները, ուսումնասիրում է լեզուն ինքն իր մեջ, ինքն իր համար, որ կատարյալ վճռականությամբ հասատվում է ժընեի գիտնականի հիմնական աշխատության եղբափակիչ տողերում (տես Նրա «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը», ոռուս. թարգմանություն), մյուսը, որը հիմնագրելէ Ն. Յա. Մառը և շարունակում են Նրա հետեւրդները, լեզվական նյութը ավելի խոր հասկանալու համար դուրս է գալիս լեզվի շրջանակներից: Դրա կապակցությամբ մեկի մոտ լեզուն և մտածողությունը անջատվում է, և այն էլ այն ժամանակ, երբ մյուսների մոտ զբանք մոտենում են այն աստիճան, որ անհրաժեշտ է լեզվաբանին իր լեզվաբանական աշխատությունների մեջ, Դրա շնորհիվ վերջին դեպքում բառի խմաստացին կրղմը, քերականական ձևերը և քերականական ամեն տեսակի կառուցումները պարզ կերպով բացահայտում են լեզվի ձևական կողմերը և ավելի խոր ու լրիվ է գառնում լեզվական կարգերի նկարագրությունը:

Ոչ միայն լեզուն է հանդիսանում հասարակական սեփականություն, այլև գործող գիտակցության նորմաներն իրենց ծագման և զարգացման մեջ պայմանավորված են հասարակական գործունությունը: Այս դիմումը ներգործելով լեզվի՝ որպես ռեալ գիտակցության վրա, հասարակականորեն պայմանավորում է լեզվի բոլոր արտահայտությունները: Դրանով իսկ սոցիալական նշանակություն են ստանում ոչ միայն նախադասությունը («Նախադասություն—միտք» ըստ Ն. Յա. Մառի), այլև բառը, ձեռոյթը, հնչույթը:

3. Բառի բովանդակությունն ու ձևը, ինչպես նաև նախադասության իմաստային և ձևական կողմերը այս կամ այն ձևով առնչակցված են լեզուն գործածող հասարակական միջավայրի աշխարհայեցողությանը: Բովանդակությունը հագեցնում է լեզվի բոլոր արրերը: Այդ ուղիով լեզվի մեջ հաղորդվում են արբեր հասկացություններ: Նրանք հանդիս են գալիս

բառի իմաստաբանության, նախադասության իմաստային բովանդակության և քերականական բազմատեսակ կառուցումների մեջ: Վերջինների պատահական առաջացումը, ինարկի, վերանում է: Նրանք կատարում են ողցիալական որոշ պատվեր և այդ պատճառով իրենց բոլոր բաղկացուցիչ մասներով իմաստավորված են: Այսպես, օրինակի համար, ենթակայի, ստորոգյալի, որոշիչի առարկայնության, պրոցեսի և այլնի մասին եղած պատկերացումները լեզուների քերականական կառուցվածքի մեջ ստանում են իրենց ձևական այս կամ այն արտահայտությունը: Պրոցեսը կարող է հաղորդվել բայի կամ անվան իմաստաբանությամբ, որ հանդիս է գալիս կենդանի խոսքի ստորոգյալի, առողջանության, շեշտավորման և այլնի մեջ: Հատկանշականությունը բովանդակում է ածականը, որոշիչը: Պրեդիկադը անջատում է նախադասության անդամը՝ ստորոգյալը: Սուբեկտը մեծ մասամբ հաղորդվում է ենթակայով, բայց կարող է ամփոփվել բայական ձևի մեջ և այն: Նրա արտահայտման համար օբապարծում են ձևաբանության և շարահյուսության տարբեր տեսակի քերականական կառուցումները:

Այդպես է բոլոր լեզուների համար ընդհանուր օրինագը, որը բացահայտում է ստեղծագործական պրոցեսի միասնությունը և միևնույն ժամանակ հանդիս է գալիս քերականուկան ձևերի բոլոր բազմապանությունների մեջ: Ենթակայի, ստորոգյալի, առարկայնության, պրոցեսի և այլ հասկացությունները իրենց մանրամասների մեջ տարբերվելով հանդերձ՝ միավորում են բոլոր լեզուները, նրանցում հանդիս գտնվով այս կամ այն իմաստավորումով: Ենթական կարող է ընկալվել որպես գործող անձ, որպես մի անձ, որը իր վրա կրում է գործողության արգյունքը (համեմատիր ենթական կրավորական սեփ բայերի դեպքում), որպես մի անձ, որին պատկանում է կատարվող գործողությունը (համեմ, նախադասության պոսիսիվ (ստացական) կառուցվածքները), որը կրում է ուժեղ գրդիրի գրությունը և այլն: Այդ բալոր նրբերանգների դեպքում թեկուզ և խիստ էական, այնուամենայնիվ առանձնանում է միասնական պատկերացում ենթակայի մասին, դատողության կենտրոնի մասին, որը ընութեագրվում է յուր գոյության, ընթացքի մեջ, որի մասին հասկացությունը, բոլոր հնարավոր մանրութների պարագայում էլ, համենայն գեպտ ընդհանուր է մնում բոլոր լեզուների համար, Ենթակայի, ստորոգյալի հասկացությունը ընկած է աշխարհի լեզուների

Հակայական դանդվածի հիմքում: Լեզվի մեջ հետազոտվող և նրանով արտահայտվող հասկացական կատեգորիաները հենց առաջին հերթին հանդիսանում են այն կապող օղակը, որը միացնում է լեզուները:

Հասկացությունները իրենց տարրեր կատեգորիաներով հանդիսանում են այն բաղան, որի վրա կառուցվում է լեզվի ձևական կրղմը, որը առանձնացնում է իր քերականական կատեգորիաները: Իսկ ինչ վերաբերում է այդ վերջիններին, ապա իրենց հազորդման եղանակների բազմազանությունը իր հարստությամբ թվում է բացառիկ: Յուրաքանչյուր լեզվի համակարգը տարրերվում է մյուսից ոչ այնքան հազորդվող հասկացությունների նըրերանդների զանազանությամբ, որը նույնպես աեղի կարող է ունենալ, որքան այդ հասկացությունները հազորդելու համար նրա օգտագործած քերականական ձևերով: Այդ հոդի վրա նախադասության կառուցվածքի, բառերի ձևավորման և նույնիսկ տարրեր սիստեմի լիզունների հնչյունական կողմի մեջ ստացվում են նմանություններ ու տարրերություններ, թեև լուզ այդ ըսլոր լեզուններում էլ լինեն քերականական համապատասխան արտահայտություններ ենթակայի, ստորովյալի և տարրեր տեսակի հատկանշային հարաբերություններ հազորդելու համար: Դրանում կարելի է տեսնել նմանության մոմենտներ: Իսկ տարրերությունները զիմավորապես լինում են ձևական կողմի մեջ: Հատկանշականությունը կարող է հազորդվել և առանց նախադասության առանձին անդամի անջտաման (որոշիչ), վերջինի տոկայության դեպքում այնուամենայնիվ ոչ բոլոր տեղերում է, որ նկատվում են քերականական հատուկ կատեգորիաներ, որոնք առանձնացնեն համապատասխան խոսքի մասեր (ածականներ) և այլն:

Բառի իմաստաբանությունը և քերականական ամբողջ կառուցվածքը տվյալ դեպքում երբեք էլ վերջին դերը չեն կատարում: Լեզվաբանական աշխատանքի մեջ իմաստային կողմը նշանակալի տեղ է զրավում, բայց նաև նա գտնվում է շարժման մեջ: Աշխարհայացքի փոփոխվող նորմաները ստանում են իրենց արտացոլումը նաև լեզվի մեջ, հետևաբար նաև զարգացող այն հառկացական կատեկորիաների մեջ, որոնք հանդիս են գալիս լեզվական նյութի մեջ: Երեան են զալիս նոր ձևեր, հները ստանում են այլ բովանդակություն: Տեղի է ունենում խոսքի

պարզացման դիալեկտիկական անընդհատ առաջնապացումը, որը նկատվում է նրա պատմական շարժման տարրեր էտապներին:

4. Լեզվի բոլոր երեսոյթները ունեն իրենց պատմական հիմնավորումը, Նրանք մարդկային հասարակության վերապրած պատմության արտադրանքն են: Այդ իսկ պատճառով լեզուն իր հասարակական բնույթով ենթարկվում է պատմական շարժման օրենքներին՝ հայտնաբերելով զարգացման դիալեկտիկական առաջնապացի մոմենտները: Լեզուների զարգացումը, ինչպես նաև պատմական պրոցեսի բոլոր դրսնորումները, աեղի են ունենում էվոլուցիոն և փոխակերպվող ձևերով: Լեզվի մեջ տեղի ունեցող անընդհատ փոփոխությունները ծնունդ են էվոլուցիոն տեղաշարժներ, որոնք նկատվում են լեզվի պատմական կյանքի որոշ շրջանում: Այդ շրջանների մեջ տեղի են ունենում ավելի արժատական հերթափոխումներ: Քանի ակապես կուտակված նորմաները, որոնք հակասում են գործող կառուցվածքին, կարող են հանգեցնել լեզվի ամբողջ ստրուկտուրայի արժատական բնույթը: Այդ գեղագում լեզվի կառուցվածքը ստանում է որպակական փոփոխություններ, որոնց հետեւանքով վրա է հասնում իր որպակով նոր ձևավորում: Լեզուն իր մեջ կատարված պրոցեսների ընթացքում կարող է խիստ կերպով հեռանալ հին, իր ավելի հեռու անցյալի վիճակից: Լեզվի մի կառուցվածքը մյուսով է փոխարինվում՝ պատմական տեսակետից կազմելով փոխանցումներ լեզվական պրոցեսի մի աստիճանից դեպի մյուսը: Հենց դրանով լեզվի մեջ սահմանվում են ստադիալ անցումներ, մի ստադիալ հերթափոխումը մյուսով:

Այդպիսի փոփոխություններ կարող են շոշափել նաև լեզվական ոչ ամբողջ կառուցվածքը, առանձին երեսոյթների մեջ էլ կարող են տեղի ունենալ ուժեղ տեղաշարժներ, որոնք չեն շոշափում լեզվի ամբողջ կառուցվածքի առաջատար հատկությունները Նման տեսակի նոր վիճակի պարզ փոխանցումներ նկատվում են բարի սեմանտիկայի և նրա ձևի, շարահյուսական ֆունկցիաների և օժանդակ ցուցանիշների ձևավորման մեջ և այլն: Զիի և բավանդակության նկատմամբ ցուցաբերած միասնական վերաբերմունքի անհամեշտությունը լրիվ ուժի մեջ է մնում նաև տվյալ դեպքերում: Իրենց փոխարարերությունները բացահայտում են ուսումնասիրվող պատմական պրոցեսի ամբողջ բարդությունը: Նոր բովանդակությունը կյանքի է կոչում նոր ձև, բայց նա կարող է տեղափորվել նաև հին ձևի մեջ, որը այդ-

կապակցությամբ այլ նշանակում է ստանում: Նոր ձեզ կարող է հարմարեցվել հին բովանդակությունը հաղորդելու համար, ընդուրում փոփոխման է ենթարկվում ոչ միայն լեզվի ձևական կորմը, այլև գաղափարականը: Նոր բովանդակություն կրող հին ձեզ արդեն որակապես տարբերվում է հենց իր նախորդ վիճակից: Այդպիսի փոփոխությունները միայն բարին և նրա իմաստաբանությանը չեն վերաբերում. նրանք կարող են շոշափել քերականական կառուցվածքը՝ ձևաբանության և շարանառության տարբեր մանրամասների մեջ: Ամեն ինչ լեզվում շարժման մեջ է գտնվում: Յուղիտերը, որը օգտագործվում է կիսոնկարահանումների ժամանակ, արդեն անտիկ աշխարհի աստվածություն չէ (հմեմտ, իմաստաբանական ընթացքը՝ Յուղիտեր՝ երկնային լույս—լուսարձակ): Դրիչը, որով ես գրում եմ, ոչ մի հարաբերություն չունի կենդանական աշխարհի հետ և նույնիսկ նման էլ չի սագի փետուրին: Թրանսիտական „յեւն արդեն գերանուն չէ, ինքնուրույնաբար չի օգտագործվում և օժանդակ գեր է կատարում միայն բայի հետ: Եցական նախդիրը, որ անցյալում մոտենում էր օժանդակ բառի, դադարել է այդ լինելուց: Նշանակություն ունեցող բառը որպես օժանդակ բառ գործածելու գեղքում, օրինակ բարդ բայական ձևերի մեջ, երբեմն ոչ միայն շարանյուսական՝ այլ նշանակում, այլև այլ բովանդակություն է ստանում և այլն:

